

ինքնապաշտպանութիւնը թաթար ցեղի դէմ .

— Ժողովուրդը :

Ո՞վ տարաւ իր ուսերու վրայ Սարգարապատի եւ Ղարաքիլիսի հերոսամարտը .

— Ժողովուրդը :

Ո՞վ մղեց Մուսավաթի դէմ Բագուի արիւնահեղ կռիւները, որոնք թեւ տուին Հայաստանի բանակին ընդդէմ արչաւող թուրքութեան եւ քիչ չնպաստեցին «հին պատգամի» իրականացման . . .

— Ժողովուրդը :

Առանց ժողովուրդի, բնականաբար ոչինչ չ'ըլլար, բայց կան պարագաներ, երբ այդ ժողովուրդը անդեկ, անճարակ, առանց ծրագրի ու ձեռներէցութեան, կը տարուբերուի փոթորկայտոյ անցքերու մէջ եւ գահավէժ փախուստ կուտայ բուռ մը զինուած թիւրք կամ թաթար հրոսակներու առջեւ : Նա ի յայտ կը բերէ իր ոյժերը միմիայն այն առեւ, երբ հանդէս կուգայ կազմակերպիչ ու վարիչ մարմինը : Այդպէս էր բոլոր վերոյիշեալ դէպքերու մէջ եւ բազմաթիւ այլ դրուագներում մեր նորագոյն պատմութեան :

Մասան, ժողովուրդը — եւ ոչ միայն մերը, այլ եւ աւելի բարձր ժողովուրդները — ճգնաժամային վայրկեաններու մէջ քոսային տարերք մըն է, եւ պատմութիւնը հրահրողը, պատմութեան լոկոմոտիվը, յառաջատար ոյժը՝ կազմակերպութիւնն է, որ նոյն ժողովուրդի ծոցէն կ'ելլէ :

Այդպէս կ'ուսուցանէ համաշխարհային տարրական պատմա-փիլիսոփայութիւնը : Եւ այդ ճշմարտութեանէն չի կարող շեղիլ ինքը հայոց փիլիսոփան — Դաւիթն անյաղթ Անանունը, հակառակ իր մարքսիստական լիակատար սպառնալիւթեան :

Պօսե՞լ արդեօք անհատներու դերի մասին այդ պատմութեան մէջ, ասե՞լ արդեօք, թէ ինչ կը ներկայացնէր Արամի դէմքը այն օրհասական եւ բախտորոշ կռիւներու օրերուն, երբ «հին պատգամը» — հայոց անկախութեան դադարը — բռնուած էր իր դժոխային երկունքով . . .

Կորած ճիւղեր են, մարքսիստին բան չէք հասկացնի, մանաւանդ հայ մարքսիստին, որ իր հաւատամքն ու իմաստութիւնը քաղել է Պլէխանովի եւ Լենինի բրօշուրներէն :

Առեղծուած է, այնուամենայնիւ, թէ ինչպէ՞ս մէկէն ի մէկ, Անանունի գրչի հարուածով, «հին պատգամի» իրագործողները կամ անոր սատարողները — ամենէն առաջ Դաշնակցականներ — կը նետուին մեծատուններու, շահագործողներու եւ խարդախողներու տոգրակը, որպէս գազափարագուրկ ու հակափողովրդական տարրերու . . . Հոս այլեւս չեն օգներ մարքսիստական սովետութիւնները, նրման հետեւեալին .

— Մենք չենք ըսեր, թէ Արամները, Մուրատներն ու Ռոստոմները մեծատուններ ու շահագործողներ են, մենք մարքսիստներս երբեւոյթը կը քննեք ընդհանուր առմամբ, կ'ըսենք, որ Դաշնակցութիւնը գործիք եղած է մեծատուններու, փաշաներու եւայլն, գործիք եղած է հայ բուրժուազիայի . . .

Այսպէս կ'ըսէին միշտ մեր հակառակորդները :

Այս դատողութիւնը խիստ ընտանի է մեր մարքսիստներու մէջ, անգամ այսօր, թէ եւ ինքը Անանունը կը մերժէ հին մարքսիստական յիմարութիւնը*), որու համեմատ թիւրքահայոց շարժումները յղացումն էին կոպիտահայ բուրժուազիայի, որը շուկայ կը փնտոէ եղեր իր սպրանքները արտահանելու համար :

Ինչո՞վ բացատրել, ուրեմն, վերոյիշեալ արամաբանական թոխչքը . «Նրանից առաջ (այսինքն բանուոր դասակարգից առաջ. Մ. Վ.) մեծատուններն ու արածնեալները սեղան նստեցին . . . Բայց որովհետեւ խարդախութեան ու շահագործման շաւղով ընթացան» . . . եւայլն (աես վերը ամբողջ քաղուածքը) :

Ինչի՞ վերադրել — անդիտակցութեան, թէ վատութեան : Յամենայն դէպս, մենք ցաւօք սրտի կ'արձանագրենք, որ անաչտութիւնը նշանաբան անած հայ տարիքոտ գրող մը ոչ միայն կը խարդախէ հայ պատմութիւնը իր այդ արտաոտոց մեկնութեամբ, այլ եւ կոպիտ հայհոյանք կը նետէ ամբողջ կուսակցութեան այն հազարաւոր ռազմիկներու յիշատակին, որոնք ընկեր են «հին պատգամի ճանա-

*) Մարքսի վարդապետութեան հասցէին չէ, որ կ'ուղղենք այս նախատինքները . հայկական մարքսիզմը շատ քիչ կապ ունի ճշմարիտ մարքսիզմի հետ :